

ՏԱՍԵՆՍԵԿԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Օտարաբարդացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԵՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ երեւանից: Նամակ Նոր-Յայտարարից: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Յաճախողներ: Հակակրօնական շարժում Ֆրանսիայի մէջ: Նամակ Պարսկաստանից: Արտաքին լուրեր: խՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲՈՎԱՆԵՐԱԿԱՆ: Արդեօք կօգնի մեզ գիւղատնտեսական ընկերութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Մարտի 10-ին

Կար ժամանակ, երբ մարդկանց յարաբերութիւնները միմեանց հետ շատ պարզ էին: Կրօնական, կառնածական և այլ օրանց նման հաշիւները վերջանում էին միայն ազնիւ խօսքով, բերանացի պարտականութիւնով, որ դրվում էր պարտատիրոջ վրա: Այդ այն ժամանակն էր, երբ ևս հաւատ էի ընծայում քեզ, դու երկրորդին, երկրորդը երրորդին, երրորդը մի ուրիշին և այլն: Սա պարզութիւն սիրող նախապետական ժամանակն էր: Բայց անցաւ ժամանակների այդ շրջանը և մենք այժմ ուրիշ դարում ենք դասվում: Ժամանակը փոխվել է: Եւ մենք և ամենի բերնից: Այժմ ոչ մէկի խօսքը միւսի մօտ կօպէկի տեղ չէ ընդունում: Ո՛ր կայ երկուստեք բուրբ հաշիւ, այնտեղ կայ և պարտաւթուղթ, այնտեղ պէտք է լինի և պարտատիրոջ ձեռքը, պաշտօնական ի հարկէ, վաւերացրած: Ո՛ր մնաց այն դարը, երբ մարդիկ միմեանց պարտաւորակ, մի որ և ինչ պայմանաւթուղթ տուած ժամանակ մատները թաշարէի մէջ թափարկելով էին միայն կնքում: Օրհնագիտութեան կարեւորութիւնը մեր դարում այնքան զգալի է դարձել, որ, եթէ միջոց, հնար

ունենային, ամենքը միմեանցից կ'անել կուգէին այդ օրհնագիտութեան հատորները: Եւ որովհետեւ ամեն մարդ անկարող է սեփականացնել իրան այդ օրհնագիտութիւնը, այս պատճառով դա միւսն է միայն հարկերից, հազարից մէկի ձեռքում, իրեն սպարտանով, մինչև անգամ հարստանալու մի միջոց, առատ աղբիւր: Խօսքս տառաւոր մանր-մունր փառաբանների մասին է, որոնք իրեն սպարով ձեռնում են, պիտակաւորապէս դատաւարում, անգրագիտ ժողովրդի արեւը, նրա դրամները, և թէ սա մի դատաստանական դրո՞ծ է սեղան ուղում: Փաստաբաններին մի կողմ թողնելով, նոյնը կարելի է ասել և նօտարների վերաբերութեամբ: Այնտեղ, այն դրո՞ծում, որ իրանց պաշտօնական պարտականութիւնից դուրս է, մասնաւոր է, նրանք աշխատում են դուրս բերել խնդիր ունեցողի գրգռելից որքան կարելի է անել փող: Ժողովուրդը անկարող է զանազանիւ որովհետեւ նրանք արդարանում են նրանով, թէ կատարել են կամ կատարում են մասնաւոր դրո՞ծ, չոր պահանջում է, ի հարկէ, այս ու այն ծանր աշխատութիւնը:

Մենք շատ ուրախացանք, երբ «Մշակի» միջոցով ստացանք թիֆլիսում նոր բացված Վրաստանական գրասենեակի յայտարարութիւնը, որով գրասենեակը յայտնում է թէ նա նպատակ ունի ծառայելու ժողովրդին, գրելով նրա համար դաւանալու խնդիրներ, պայմանաւթուղթեր, պրօէկտներ և պաշտպանել նրա գործերը դատաստանաւորում, յանձն առնել բազմաթիւ գրագրութիւններ ամենապարտաւոր դերով:

Յանկայի է, որ նոյնանման հիմնարկութիւններ բացվելին և մեր դատական քաղաքներում:

Յովհաննէս—Հեթում

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Մարտի 6-ին

Մեր քաղաքացիք այս քանի օր է որ պարտաւոր են հաշտանալով հին դէպատառ պ. Ս. Աղայեանցի հետ: Հաշիւներից երեւում են շատ արտաքին կարգի ծախսեր և մի մեծ գումար աւելանում է պ. Ս. Աղայեանցի մօտ, որը այդ փողերը հասարակութեանը յանձնելուց հրաժարվում է:

Յուսանք որ նոր ընտրած դէպատառ պ. Գովթարով չի հետևի իր նախորդի օրինակին և ժողովրդին չի ծանրաբեռնի հազարաւոր սպառնալիներով, մի և նոյն ժամանակ մեզ շատ ցանկալի է սպասել, որ պ. Սիմոն Աղայեանցը յօժարութեամբ կը վերջացնի իր հաշիւը ժողովրդի հետ, որովհետեւ քաղաքը արդէն կազմել է հասարակական վճիռ 600 մարդի ստորագրութեամբ և ընտրել է հաւատարմաւորներ:

Մեղանում եղանակը շատ լաւ է, և դա չափից դուրս միջնորդական է. դարձան գաղութ շատերը կը մարքիւն գետում լողանալով, որովհետեւ ուրիշ երբ չը կայ մարքութիւնը պահպանելու, քանի որ մեր քաղաքը բաղնիքից դուրս է և ոչ ոք դրա վրա չէ մտածում:

Մեղանում տուր և դրոցը կարծես սովորական դրո՞ծ է դառել, փողոցային ամենախաղաղակ և անհերքելի յիշողներին չափ չը կայ: Օրերումս մի մարդ սաստիկ պատմվում է մէկին յանդիմանելու միջոցին և անոխարիներին կերպով կորցնում է իր առամիտը:

Ախրս, որ Մովսէս կենդանի չէ և նրա օրհնեւորը «սկիւն ընդ անկան և ատամն ընդ ատամն» իրանց գործիքները կորցրել են:

Գեղամայ ծովում խորատուրված ֆուրգօնը դուրս են բերել: Անցեալ տարի ծովը համարեալ թէ 15 մարդ խեղդեց:

Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր հրատարակում ենք «Մշակի» վերջին համարը Զատիկի տօններից առաջ: Վաղը, չորաթ օր, մեր լրագիրը չի հրատարակվի, նոյնպէս չի հրատարակվի Երեքշաբթի և Կորեքշաբթի օրերը, իսկ հետեւալ համարը կը հրատարակենք հինգշաբթի օր, ապրիլի 1-ին:

Թիֆլիսի բարեգործական ընկերութիւնը, ինչպէս երեւում է նրա արձանագրութիւններից, որոնք տպված էին «Մշակի» № 49 մէջ, գիտաւորութիւն ունի հիմնել թիֆլիսում հայ օրը և չքաւոր աշակերտների համար մի ապաստարան: Կա շատ գովելի և ուրախալի մի գիտաւորութիւն է, միայն ցանկալի է որ այդ ապաստարանի մէջ նշանակվէր ընկերութեան կողմից մի վերակացու, որ պատկանէր մեր ինտելիգենտական դասակարգին: Ընկերութիւնը յայտնում է, որ ապաստարանի կազմակերպութեան համար մշակված է արդէն մի նախագիծ: Ցանկալի է ծանօթանալ այդ նախագիծի հետ. երբ այդ նախագիծը հրատարակված կը լինի, դա մեզ առիթ կը տայ քննութեան ենթարկել ընկերութեան մտադրված ձեռնարկութեան էութիւնը:

Մարտի 20-ին թիֆլիսի Գօրգօլի փողոցի վրա մի աղքատ հայ անդուլտութեամբ ընկաւ փողոցում անցնող կառքի տակ և վնասեց կառքի աւելիների տակ իր ձեռները: Աղքտեղ պատահմամբ ներկայ է դանում պ. Ս. Ղ. Նա տալիս է թշուառին մի 5 ռուբլ և ուղարկում է նրան կառքով հիւանդանոց:

Քիչ ընկերութիւններ ունենին, դարձեալ կազմվում է մի նոր ընկերութիւն թիֆլիսում: Տեղական հայ լրագիրներում կարգում ենք որ կազմվում է մի ընկերութիւն, 10 ռուբլ անդամական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԴԵՕԿ ԿՕԳՆԵ ՄԵՁ ԳԻՒԼԱՏԵՏԵՍԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Նախ և առաջ ընկերութեանը հարկաւոր է փող գործելու համար. այդ փողը կը ստացվի անդամներից, որից իւրաքանչիւրը պէտք է վճարէ 50 ռուբլ ընկերաբաժին: Մէկ անգամ վճարելով այդ գումարը, նա այլ ևս իրաւունք չունի յետ պահանջել իր բաժինը. նա միայն կարող է, իւրաքանչիւր հինգ տարին լրանալուց յետոյ, ստանալ իր զրած ընկերաբաժինների համապատասխան շահը: Եթէ ընկերութիւնը կը և ինչ խախտվելու լինի, նորա բոլոր թէ շարժական և թէ անշարժ գույքը պէտք է դառնայ սուրբ խնամքի տակ: Նայ վաճառի սեփականութիւնը: (Էջ 50, § 48): Չեմ յիշում այն հակասութիւնը, որը առաջ է գալիս ծրագրի այդ վերջնական տողերից. դրա վրա մասնացոյց է արել արդէն «Մշակի» յարգելի խմբագիրը: Ես այստեղ կը յիշեմ կանոնադրութեան այն պակասութիւնը, որից դժուարութիւն է կայանում ընկերութեան գործունէութեան համար անհրաժեշտ դրամը հայթայթել: Ասացէք ինքզինք, շատ կը զանգուշ մարդիկ, որք անգամ գրվել ցանկանաւ վերս յիշված պայմաններով: Չէ թէ ինչպէս ինքն հնդկանքը առում է. «հայը չունի արտադրութիւն (ПРОДУКТ) առած բանը»: Կարելի է պ. Գալանթարեանցը յոյս է դնում վերջին աստիճան անապատով գիւղական ուսուցիչների վրա. միթէ նա կարծում է, որ նրանցից ամեն մէկը կարող է հետեւել նրա օրինակին ու 10 ընկերաբաժին գրվել, այն է 500 ռուբլ: Մի ուսուցչի համար 50, 100 ռուբլին մեծ նշանակութիւն ունի. նա հազիւ թէ կը նուիրէ մի աղջկայի գուժար, որքան էլ բարձր գասել ընկերութեանը նը-

պատակը ու համակերը նրա գործին: Վերջապէս ինչ է երաշխաւորում ընկերութեան երկար տարիների գոյութիւնը: Գիցուք թէ ընկերութեան խախտումը տեղի է ունենում առաջի հինգ տարուց ընթացքում, այն ժամանակ միայն բարեաւ տանտեակ հազար ռուբլիներ, միայն բարեաւ անդամներին խոտաւարած նիւթական շահ: Բոլորը կը մանի խնամքով վաճառի ստուգիչները: Կոչու, ինչ հիման վրա՞ յայտնի չէ. երեւի այն պատճառով որ խնամքով միաբանութիւնը եռանդով աշխույժում է ամեն մէկ աղքատութեան գործին: Կուգիւնեմք, դառն աշխատանքով հաւաքված փողերը պէտք է կրօնի, անհետանան. և ահա քեզ, ընկերացող, «ցուց ձերութեան»-ի, «մի տեսակ պէնսիլ»-ի տեղ աղքատ, սղորմութեան կարծու ուսուցիչներ: Նոյնը կարելի է կրկնել գործակաւ տարիների, արհեստագործների վերաբերմամբ: Տարա-կուսելի է, որ դրանք գալթակալին ապագայում ստանալի օգուտներից ու գրկեն իրանց հարկաւոր: Նոյն թղթագրամները: Միում են հարուստ վաճառականները, որք իրաւ է կարող են զոհնել 50 ռուբլ առանց վերան թողնելու: Ի հարկէ կը լինեն դրանց մէջ այնպիսի անձինք, որք թէ բաւարարական կամ թէ շահաւորական դարձաւորը աշիւ առաջ ունենալով, մասնակից կը լինեն ընկերութեանը:

Բայց ի նկատի առնելով հարուստի անտարբերութիւնը դէպի ամեն մի աղքատի գործ, դժուար չէ ենթադրել որ և դրանց թիւը շատ չի լինի: Գալով կանոնադրութեան միւս կէտերին պէտք է ասած, որ առհարալ ծրագիրը մեծ թիւութիւններ ունի: Եթէ ևս մտադրութիւն ունենայի քննադատել մի առ մի ընկերութեան համար առաջարկված կանոնադրութեան յօդուածները, այն ժամանակ ստիպված կը լինել արտապէս պ. Գալանթարեանցի ծրագիրը ամբողջապէս: Ես կը բուսականանամ մի քանի խոշոր պատկերներով: Ես կը ընկերութեանը 10 անդամները: Մի-

թէ կարելի է երկուսին էլ մի շարքում դառնել: Յետոյ ինչպէս պէտք է ընտրութիւնները տեղի ունենան. չէ որ այդ հարցը մեծ նշանակութիւն ունի. չէ որ լաւ կամ վատ ընտրութիւններից է կախված դրո՞ծի յաջողութիւնը և անաշուղտութիւնը: Ինչ չափով պէտք է որոշել պատգամաւոր ընդունակութիւնը, գիտութիւնը, բարոյական յատկութիւնները թէ փողը՝ որը դրանցից կը նախապատուի: Իւրաքանչիւր ընտրութիւն պահանջում է իր աշուղտութեան համար, որ բոլոր ընտրողները (անդամները) ծանօթ լինեն միմեանց հետ, որ նրանք հասած լինեն այն աստիճան դարգացման և ինքնաճանաչութեան, երբ անձնական շահերը ու ինտուիթիւնը դադարաւորները զոհ են դնում հասարակական, աղքատի շահերին: Արդեօք դառնի անդամները կը համապատասխանեն այդ պայմաններին: Արդեօք նոյն վաճառականները չեն կազմելու ընտրողների մեծամասնութիւնը. այն վաճառականները և գործակաւորները, որոնց բարոյականութիւնը սե գոյներով է նկարագրում հեղինակը իր բրջիկով երկրորդ գլխում: Վերջապէս կայ մի ուրիշ ճանապարհ, որը ոչ պակաս դժուարացնում է ընտրութիւնները, պատգամաւորների իրանց կէս ամուսնայ աշխատութեանց համար վարձատրութիւն չը ստանալն է: Կասկածելի է որ շատ զանգուշ աշխուղ և անձնաւոր անձինք, որք յանձն առնեն աղքատի մի պաշտօն: Օրինակի համար ուսուցիչը, որը թէ մտաւորապէս, թէ բարոյապէս բարձր է որ և ինչ վաճառականից, գործակաւորից, արհեստագործից, կարող է պատգամաւոր դառնալ. կարող է նա կէս ամուսն թողնել իր աշակերտներին և դնալ ընկերութեան կենտրոնատեղում կայանալը պատգամաւորաց ժողովին մասնակցելու համար: Գետ անտես եմ առնում ճանապարհորդութեան համար անհրաժեշտ ժամանակաւորութիւնը: Ասածներէս զը-ծուար չէ եղբայրացիներ, որ ընտրութիւնները կարող են անցաւող լինել, պատգամաւորները ան-

վճարով Սինեհաց աշխարհը պատմական, աշխարհագրական, բնագիտական և էսթետիկական կողմից ուսումնասիրելու, և բացի սրանից երկրի աւերակները լուսանկարելու համար: Որքան գումար պէտք է հաւաքել այդքան գործ կատարելու համար,—ը գիտեմք: Ընկերութեան ինքնաշարժութեամբ զետեղուած Երևանի հրապարակ մեր գրականութեան մէջ ամենայայտնի անձանց, ինչպէս օրինակ, հայր Ալիշանին և այլն: Կարծում ենք որ բաւական մեծ գումարներ են հարկաւոր այդ տեսակ բազմակողմանի գիտական արշավանքը իրեն բերելու համար:

ԻԳԻԻԻԻՑ մեզ գրում են: «Երկու տարի քաղաքի մեր խորհուրդը բաժանորդագրութիւններ և զանազան խնդիրներ վերաբերող գրքեր կի հրատարակութեան համար: Այդ գրքերի հրատարակութեան մասին այն ժամանակից ոչինչ լուր չը տեսնեմք մեր ազգային մամուլի մէջ: Բաժանորդները անհամբեր սպասում են այդ գրքերի հրատարակութեանը»:

ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են որ այդտեղի բնակիչները մարտ ամսի սկզբներում արդէն ուրախանում էին թէ ձմեռն անցաւ, բայց տաք օրերից յետոյ յանկարծ էլի ցրտեց: «Երևում է որ այս տարի, աւելացնում է մեր թղթակիցը, մեզ վիճակված չէ ամառը տեսնել»:

Մեզ գրում են ԻԳԻԻԻԻՑ հետեւելու: «Խօսք կայ այստեղ որ իգիւրի բոլոր պաշտօնական հիմնարկութիւնները զետեղութիւն կայ տեղափոխել կամ Ամարսի, կամ Միխայիլով գիւղաքաղաքը, որ գտնվում է Երասխ գետի վրա, որտեղ մնում է այժմ Զարթաշի գետը: Այս տեղափոխումը, ի հարկէ, մեծ նշանակաւն ունի և հասցնի իգիւրին և այստեղի վաճառականութեանը բոլորովին կընկնի»:

Նոյն տեղից մեզ գրում են: «Մարտի 5-ին իգիւրի մի տան մէջ երեք փոքրիկ եղբայրներ հաւաքված են լինում իրանց տան թոնդրի մօտ: Յանկարծ նրանցից մէկը ընկնում է թոնդրի մէջ, երկրորդը, նրանից մեծը, անմիջապէս մտնում է թոնդրի իր եղբորը ազատելու համար, իսկ ամենափոքրը սկսում է սաստիկ լաց լինել: Երբ մայրը վրա է հասնում, տեսնում է սարսափելի ծովա, նա կարողանում է ազատել կրակից իր ամենամեծ որդուն կենդանի, իսկ երկրորդին հանում է

ընդունակ դուռն կը գտն, ընկերութեան գործերը դանդաղ ու վատ կընթանան: Բայց որովհետեւ ներկայացուցիչները հինգ տարի ժամանակով են ընտրվում—ուրեմի հինգ երկար տարի կը շարունակվի նրանց անընդունակութեան, որոց է և անհաշուական ազդեցութիւնը գործերի վրա. վերջի վերջոյ ընկերութիւնը մի գեղեցիկ օր իրան անանկացած կը յայտնի: Փառաւոր վախճան:

«Ընկերութեան գիւղատնտեսական պարագմունքը յոռաջ վարելու համար»:

«§ 16. Պատգամաւորաց ժողովն ընտրում է կենտրոնական գործադիր ժողովի և նրա ճիւղերի անդամները և օգնականները, որք պէտք է կամ պատգամաւորաց ժողովի և կամ ընկերութեան չէզոք անդամներէն լինեն, և այն մասնագէտներ կամ գիւղատնտեսական գիւրքին աստիճան հետաքրքրվող զարգացած անձինք» (էջ 37)

«§ 28. Կենտրոնական գործադիր ժողովի անդամներ լինելու է ընդամենը 24» (41)

«§ 29. Իւրաքանչիւր գործող անդամին, նայելով նորա գործի ընդարձակութեանը, աշակցում են մի մի, երկուքական, երեքական և այլն առաջի կարգի, երկրորդ և երրորդ կարգի: Զիւղերի գործող անդամների և նրանց օգնականների թիւը կարող է, նայելով պարագմուն հիւղերի թիւին, պակաս լինել կենտրոնականից» (էջ 43)

«§ 30. Կենտրոնական գործադիր ժողովի և ճիւղերի ժողովից անդամները և օգնականները իրաւունք ունեն ձրիաբար կերակրվել ընկերութեան հաշուով պատրաստվող ընդհանուր սեղանից» (էջ 43)

Ուղիղն ասած շատ դժուար է ծրագրել որչա՞րապար ստանալ ընկերութեան կազմակերպութեան և գործունէութեան մասին: Հիլինակը նշանաւոր ինտելիկտներ վերաբերումը շատ համառօտ է խօսում, իսկ ամբողջ երեսներ է նուիրում երկրորդական հարցերին: Եթէ ենթադրենք, որ բոլոր արգիւնները յաղթված են, որ ընկերու-

թյունը: Ասում են մեծն էլ շատ է վնասվել և չի ապրի»:

Լսում ենք, որ Զատիկից յետոյ հայոց ապագայ ուսուցչական ժողովի օգտին դասախօսելու են պ. պ. Աբխաթով Գովհանիսեանց, Ա. Երիցեանց, Ա. Բաճաթեանց, բժիշկ Մէլք-Բէգլարեանց, Գարոյ, Ս. Սպանդարեան, Սպանդարեան և Արգար Գովհանիսեան: Գասախօսութեան առարկաներն են 1) Ընդհանուր ուսուցչական ժողովի նպատակը և նրա նշանակութիւնը, 2) Բարեգործութիւնը հայոց մէջ, 3) Ծաղկոց և նրա նշանակաւնութիւնը, 4) Տարափոխիկ հիւանդութիւններ, 5) Համառօտ պատմական հայեացք Ռուսաստանի հայ մամուլի վրա, 6) Գեղարուեստական ճաշակի զարգացումը դպրոցների և բնտանեաց մէջ, 7) Եւրօպական տէրութեանց պետական կազմակերպութիւնը, 8) Մեծ և փոքր աղբորթիւններ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Յունաստանի ներքին քաղաքականութիւնը ներկայումս շատ անմիջապէս պատկեր ունի, գրում է Ալէքսից «Голосъ» լրագրի թղթակիցը: Կուսակցական կուռները սաստկացած են և անկողմնապահ անձինք խոստովանվում են, որ երկու կուսակցութիւնն էլ թէ աջակողմեան և թէ ձախակողմեան չեն պահպանում պարլամենտական քաղաքականութիւնը: Պատգամաւորների մէջ շատ անգամ այնպիսի նախադասութիւններ են լինում, որոնց ուրիշ քաղաքներում միայն հրապարակներ լին կարելի է լսել, իսկ հասարակութիւնը ծափահարելու կամ սուլելու ժամանակ այնպիսի աղմուկ է բարձրացնում, այնքան անկարգ է վարվում, որ մարդ ամաչում է ոչ թէ միայն պարլամենտի անդամ լինել, այլ և այդպիսի պարլամենտին այցելելու: Տարաբաղդաբար իրանք միմիտաները, որոնց պետական գրութիւնը պահանջում է ծանօթութիւն քաղաքականութեան կանոնների հետ, շատ վատ են

թիւնը կազմված է պ. Քալանթարեանցի առաջարկած ծրագրի համեմատ, դրամագրութեան ժողոված է, պատգամաւորները և գործադիր ժողովի անդամները ընտրված են—այսպէս հայոց է դրսևում. ինչ պէտք է անել, ինչպիսի պէտք է սկսել: Այդ անցյալ է. հեղինակը բաւականաւոր է մի քանի ընդհանուր և մոլթ ֆրագիւն առաջ բերելով:

Գաւառականը քննութիւնը: Հաշւներ մօտաւորապէս, որքան «մասնագէտներ կամ գիւղատնտեսականութեամբ ցվերին աստիճան հետաքրքրվող զարգացած անձինք» են հարկաւոր ընկերութեան պարագմունքները աջողութեամբ առաջ տանելու համար: Կենտրոնական գործադիր ժողովը կազմվում է 24 գործող անդամներից, որանցից ամեն մէկը պէտք է միջին թիւով երկու օգնականներ ունենայ: Այդ թիւը չափազանցած չէ, որովհետեւ եթէ մի, երկու գործող անդամներ ևս կարող են վարել մեծակ իրանց մասի գործերը, այնու ամենայնիւ շատերին անհրաժեշտ են բազմաթիւ օգնականներ. օրինակ հաշուապահին հաղի թէ բաւական լինեն մինչև անդամ 10 օգնականներ: Ուրեմն միայն կենտրոնական գործադիր ժողովը պահանջում է մօտ 75 անդամ վերև յիշված յատկութիւններով: Այդ թիւ վրա աւելացրէք ճիւղերի գործող անդամներին, ուրիշ մանր ծառայողներին և կը տեսնեք, որ ընկերութիւնը կառավարելու համար պէտք է մի ամբողջ դունդ մարդկանց: Ի հարկէ «մասնագէտներ և ցվերին աստիճան զարգացած անձինք» լաւ, լաւ ուժերիկեր կը պահանջեն, որովհետեւ «նոքա իրանց պաշտօնակարութեան բոլոր ժամանակը պարտաւոր են իրանց բոլոր բարոյական, մտաւոր և ֆիզիկական ոյժերը մի անգամ ընտրած ճիւղին նուիրել» (էջ 41, § 27.) Եթէ ասենք, որ իւրաքանչիւր գործող անդամ կը ստանայ իր աշխատութեան համար 1500 ռուբլ տարեկան և նորա օգնականը 600 ռուբլ (չէ թէ չափ վարձատրութիւն չեն ստըս), դուրս կը գայ՝ որ միայն կենտրոնական գործադիր ժո-

վարվում ընդդիմադրականներին հետ և միմիտարական այդպիսի անքաղաքականութիւնը վատ օրինակ է տալիս ներկայ եղող հասարակութեանը: Երբ պատգամաւոր դօկտոր Լօմբարդոս իր ճառով մասնացոյց եղաւ, պատերազմական միմիտար վարվողներ ընտրութեան ապօրինութեան վրա, միմիտար նախադաս կուռներու խօսեան կողմների պատգամաւորներին օրոնաւորներ և մարդասպաններ՝ անուանեց: Այդ խօսքերը այնպիսի աղմուկ և անկարգութիւն բարձրացրին, որ կարելի է սպասել, թէ շուտով կը սկսի կը բռնկւնքներով:

Պատգամաւոր Եսթրատոս մի գրաւոր առաջարկութիւն ներկայացրեց կատարված բոլոր ընտրութիւնների ապօրինութեան մասին և այդ առաջարկութեան ձեւ էլ շատ քաղաքավարի չէր: Նրա մէջ է միջի այլոց ասված է, թէ կառավարութիւնը, փակելով անցեալ տարվայ պարլամենտը, ամենամոթելի կերպով խանգարեց սահմանադրութիւնը, որ Յունական թագաւորը, Թէսսալիայի մէջ ընտրութիւններ նշանակելով, «գրկվեցաւ արժանաւորութեանց և իրաւունքից Յունաստանի սահմանադրական թագաւոր լինելու համար և որ 1881 թուականի պարլամենտի փակմանից յետոյ Յունական թագաւորի բոլոր կարգադրութիւնները օրինական ոյժ չունեն: Պարլամենտը, ճշմարիտ է, անուշադիր թողեց այդ առաջարկութիւնը, բայց նրա ներկայացնելն անգամ ապացուցանում է, որ Յունաստանի ներքին գործերը բաւական լարված են:

Կուռներու խօսքի միմիտարութիւնը հրաժարական տուեց, բայց այդ հրաժարականը տրվեցաւ շատ ուշ և մի քանի անվայել անցքերից յետոյ: Ամենից առաջ պէտք է նկատել, որ սահմանադրական մի այլ երկրի մէջ միմիտարութիւնը, տեսնելով, որ ընտրութիւնները նրա կողմնակից մեծամասնութիւնը չը տուին, կամ անցապաղ հրաժարական է տալիս, կամ արձակում է պարլամենտը և նոր ընտրութիւններ է նշանա-

դով համար 65 հազարից ոչ պակաս ծախք կը լինի տարին. անտես եմ առնում մանր պաշտօնականների ու շատ ուրիշ դանդաղ առարկաների համար հարկաւոր փողը, որը գրեթէ նոյն դուռնաբիւրոն կը հասնէ: Եւ այդպիսի մի ընդարձակ ձեռնարկութեան պ. Քալանթարեանցը կամուրծ է ձեռնամուկ լինել աննշան դրամագրութիւն, այն է 50.000 ռուբլով: Որքան արդիւնք պէտք է ստացնել ընկերութեան գործը, որ կարողանայ ծածկել բոլոր ծախքերը, ու դեռ դուռ չա՞ն էլ մնայ և բաժանվի կամ գործադրվի հեղինակի § 45 յայտնած ցանկութեան համեմատ: Ումից, ինչ բանից պիտի ստացվին այդ ահալին օգուտները: Չէ թէ խեղճ հայ գիւղացիներից: Վերջին յետ դցած կօպկներէր պէտք է գրկվի գիւղացին ապագայում ստանալի երեսակցական շահի համար: Հայոց գիւղատնտեսական ընկերութիւնը կը լրացնի այն տարրերի շարքը, որոնք իրեն գիւղական վաշխառուներ, տանտուներն ու դրագիրներ ծծում են գիւղացու արիւնը: Իրաւունք կունեայ յայնժամ զերան թուացնելու 50 ռուբլ դոնկ կարողանար, ևս կովկասը կերպարանափոխ կանեմ այնպէս՝ որ մի քանորդ դարից յետոյ չէ՛ք կարող ճանաչել նրան» (էջ 19.) Այս, ճիշտ է, դուք կարող էք, պ. Քալանթարեանց, համեմէ ձեր նպատակին, բայց ջաւը հենց գործում է որ մի քանորդ դարից յետոյ այլ ևս չենք կարող ճանաչել մեր կովկասը:

Թէ Աստուած կը սիրես, ընթերցող, մի անգամ էլ կարգալ վերե արտասպաւած կանոնադրութեան երեսներով յօդուածը: Ահա, որտեղ է ընկերութեան ծրագրի կատարելագործութեան հասնումը: Ասացէք ինչդեմ, պ. Քալանթարեանց, ինչ հիմնարկութեան համար էք մշակել դուք կանոնադրութիւնը. չը լինի թէ անկեղանցի կամ հիւանդանոցի համար:

Կում: Կումանդուրոսի միմիտարութիւնը յետաձգում էր իր հրաժարականը, պատճառ բերելով թագաւորի հիւանդութիւնը:

Նոր միմիտար-նախադաս Տրիկուպիսի մասին կը նկատեմ, որ նա Լօմբարդոսի Յունական նախկին դեսպանի որդի է, կըթվել է Անգլիայի մայրաքաղաքի մէջ և պաշտում է անգլիական կարգ ու կանոնները: Տրիկուպիս, ինչպէս յայտնի է, իր առաջին ճառի մէջ մասնացոյց եղաւ Յունաստանի սահմանների ընդարձակման անհրաժեշտութեան վրա: Հաւատացնում են, որ նրա ճառը վատ տպաւորութիւն գործեց մի քանի մայրաքաղաքների մէջ, որոնց կառավարութիւնները մտադիր են այդ ճառի պատճառով հարցեր առաջարկել Յունաստանին:

ՀԱՎԱԿԱՆԱԿԱՆ ԵՄԻՍԻՍԻՍ ՏՐԻԿՍԻՍԻՍ ՄԷՋ

Մարտի 15-ին Ֆրանսիական պատգամաւորների ժողովի մէջ եղած քուէարկութեանց երեւում է, որ այդ ժողովի մէջ մնացել են ընդամենը 37 հակառակորդներ այն հակակողմական քաղաքականութեան, որին հետեւում է Տրիկուպիսի միմիտարութիւնը, յուսարով արմատական կուսակցութեան օգնութեան վրա թէ երկրի և թէ պատգամաւորների ժողովի մէջ: Այդ օրը, մարտին հրատարակված օրէնքները խտտութեամբ կատարելու համար, ձայն տուին 418 պատգամաւորներ 73-ի դէմ: Ինչպէս յայտնի է, այդ օրէնքները մի ժամանակ անբաւականութիւն էին պատճառում մինչև անգամ չափաւոր հանրապետականներին:

Երեւում է, որ այդ ահագին մեծամասնութիւնը միայն հանրապետականներից չէ կազմված, որովհետեւ նրանց թիւը ժողովի մէջ 418-ի չէ հասնում: Երեւի հանրապետականների հետ միացան մի քանի միապետականներ, ինչպէս բիւզոնացի մասնագործի անդամների ընտրութեան ժամանակ նրանք իրանց ձայներով յաղթող հանդիսացրին այն կանգիդականներին, որոնց միմիտար-

Չարմանք բան. ինչ մտածութիւնների ներգործութեան տակ են ծնունդ առել այդ հինգ տղերը: Շատ խորհեցի, ոչինչ հիմնաւոր պատճառ չը կարողացայ գտնել: Կարելի է միայն գուշակութիւններ անել, որոնցից ամենամոտեւոր այն կը լինի, թէ երեւի հեղինակը այդ տղերը գրելու բացած է եղել:

Աւելորդ եմ տեսնում շարունակել քննութիւնը. ես արդէն վերե նկատեցի, որ եթէ մտադրութեան ունենայից ցոյց տալ կանոնադրութեան բոլոր անկատարութիւնները, ստիպված կը լինի արտասպակ ընկերութեան ծրագրի ամբողջապէս: Բայց չեմ կարող զսպել ինձ ու մի երկու տող էլ չը աւելացնել: Ընկերութիւնը կրելու է, «Հայոց գիւղատնտեսական ընկերութիւն» անունը: Նշանակում է ընկերութիւնից օգնութիւն սպասել կարող է միայն հայ գիւղատնտեսական տարրը: Կովկասի և Փոքր Ասիայի օտար աղբարանկութիւնները կը մնան նոյն անախաճկի գրութեան մէջ. երկրի ժողովրդի մի մասն աւել կը զորանայ, աւելի ուժ կը ստանայ. միւս մասն կը մնայ անփոփոխ, հին, թշուառ վիճակի մէջ: Անհաւատարմութեան վնասակար հետեւները անյապաղ երևան կը գան: Թոյլը միշտ ենթակալ կը լինի զօրեղի հարստահարութեան, ճնշման: Վերջը անհերք է: Օտարազգի գիւղացին հետդիտեմ կը կորցնի իր հողը, իր բոլոր ունեցած չունեցածը, կը դառնայ մութացկան. և ասա, կովկասում ահալին բազմութիւն մութացկանների, որք զբոլթիւն կը տան այն ահալիւ ինչդեմ, որը զրաղեցնում է այժմ արևմտեան Եւրօպայի բոլոր գիտական տնտեսներին:

Վերջացնելով յօդուածս, ես յոյս ունեմ, որ հայ հասարակութիւնը զգուշ և խոհեմաբար կը վերաբերվի դէպի այդ նոր յարուցած հարցը, որպէս զի տեղի չունենան յետագայ զղջումները:

Մտախաւ. Մանուէլ

լուծիւնը առաջարկել էր իբրեւ Գամբետ-
տայի կողմնակիցների հակառակորդներ:

Այդ հանգամանքը ուշադրութեան ար-
ժանի է: Վախենալով, որ կառավարութիւնը
նորից Գամբետտայի ձեռքը չընկնի, միա-
պետականները ստիպեցան քուէարկել հա-
կառակ իրանց կրօնական համոզման:

Մեծամասնութիւնը չէ կարող ուրախաց-
նել Ֆրէյսինէին, որ ապացուցանում է ի-
րան պաշտպանող լրագիրներից հերքված
փաստը: Այժմ անկասկածելի է, որ հան-
րապետականների և միապետականների մէջ
համաձայնութիւն է կայացրած Գամբետ-
տայի դէմ և այդպիսով կազմած մեծամաս-
նութիւնը պահպանում է միեւնոսութիւնը:

Եթէ վերջին քուէարկութիւնը ապացու-
ցանում է, որ հանրապետականների և միա-
պետականների մէջ համաձայնութիւն կայ,
դա էլ մեծ հարուած է կղերականութեան
համար: Որովհետեւ Ֆրէյսինէի եպիսկոպոսը
շատ անուղի պաշտպանեց բենեդիկտեան
միաբնակները, 418 պատգամաւորներ
յայտնեցին, որ նրանք օգտակար են համա-
րում հակակղերական քաղաքականութիւնը,
որ բոլոր հանրապետականների նախագծի
հիմունքն է: Այդպիսով մարտի օրէնքները
ահագին մեծամասնութեամբ ստացան այն
վաւերացումը, որ մինչև այժմ նրանց պա-
կասում էր և այդ իրողութիւնը կազդէ նոյն-
պէս և սենատի վրա, որ այլ ևս առաջվայ
պէս չի կարողանայ պաշտպանել կղերական-
ներին: Այժմ շատ պարզ է, որ ոչ մի տե-
սակ անբաւականութիւն հանրապետական-
ների մէջ, հանրապետական կուսակցութեան
դէմ մաքառումն չեն կարող յաղթող հան-
գիստներ կղերականութեանը մինչև անգամ
այն դէպքում, եթէ Ֆրանսիական հողեւո-
րականութիւնը, իրան հանրապետութեան
կողմնակից յայտնէր:

Ֆրանսիական հասարակութեան այժմեան
ընթացքները դեպի կղերականութիւնը
առաջվայ պէս չէ հիմնված այն համոզ-
մունքի վրա, որ կղերականները հանրապե-
տութեան անկումը և միապետութեան վի-
րականութեն են ցանկանում: Պատերազմը
կատարելով է նոյն իսկ կղերականութեան
և նրա ձգտումների դէմ իր ձեռքն առնել
երկրի չը լուսաւորված դասերը: Այդ պա-
տերազմի անհրաժեշտութիւնը այնքան մեծ
է, որ զրան վերաբերեալ հարցերի քննու-
թեան ժամանակ կատարեալ համաձայնու-
թիւն է կայանում այն կուսակցութիւնների
մէջ, որոնք մաքառում են միմեանց դէմ
երկրի կառավարութիւնը իրանց ձեռքն առ-
նելու համար: Այդ գործի համար մեղաւոր
է նոյն իսկ կաթոլիկ հոգեւորականութիւնը,
որ երկար ժամանակ աշխատում էր առաջ-
նակարգ դեր խաղալ ֆրանսիայի մէջ: Նոյն
իսկ այդ հոգեւորականութիւնը գործը այն
գրութեան հասցրեց, որ զլիսաւորապէս կա-
թոլիկ երկրի միջ հասարակութիւնը պա-
հանջում է, որ եկեղեցին չը խառնվի ժո-
ղովրդական լուսաւորութեան գործի մէջ:
Այդ գործը հեշտ չէ ուղղել և դեռ շատ
տարիների ընթացքում ֆրանսիայի մէջ կը
շարունակվի հակակղերական շարժումը:

ՆԱԽԱԿ ՊԱՐՍՅԱՍՏԱՆԻՑ

Գաղթե՛, 12 մարտի 1882

Այժմ գրեթէ ամեն հայաբնակ տեղերում, ուր
կան հայ երիտասարդութիւն, ազգային գործող
անձինք և թարմ ու եռանդուն ուժեր, զրանց մէջ
գտնվում են և մի տեսակ, այսպէս ասած՝ պա-
պուլ—թերուսներ: Այս վերջինների վրա է խոս-
քը: Գրանք տարիների ընթացքում այնպէս խոր-
ընկած են լինում իրանց անձնական գործերի,
իրանց մասնաւոր զբաղմունքների և կենքի ամե-
նաստոր հանգիստների մէջ, որ իրանց չորս կողմը

չընթացող բնական, ուսումնական և գրական
աշխարհի հազարաւոր երեկոթներով երեք չեն
հետաքրքրվում, նրանք մինչև անգամ ստան ար-
համարանքով են վերաբերվում դէպի լրագրու-
թիւնը: Գրանք իրանց գիտութեան զիջումն ստա-
նում են մի քերականութեան կողքերը մի քանի
ամիս ծամովելով և ամբողջ իրանց կենսութեան
մի երեւ հատոր զբոսը կարգաւոր, այն էլ ֆորմի
համար, այն էլ ով գիտէ ինչ տեսակ ուղղութիւն
տուող գրքեր: Եւ եթէ որ զրանք զիջումով մի
քանի թերթ լրագիր էլ տեսած կամ կակաղելով
կարողացած լինեն, այդ նշանակում է, որ զրանք
հասել էին փիլիսոփայութեան ամենաբարձր գա-
ղթին: Այնուհետեւ զրանք իրանց համարում են
ամեն իրանց հանդիպած դէպքերի վրա բացարձակ
ճշտող և փաստաբանող: Կարգացել կամ ցոյց
տուեց զրանցից մէկին հարկաւոր գեղեցիկ և
հրաշմանդ յոգեւորական, պատկերներ և նամակ-
ներ, որոնք իսկայն կընդունէր նրանից մի դառն
փոխով հետեւալ պատասխանը «Այդ ինչ ե-
րկաշխարհի գրողներն են, ինչ միտք կայ
զրանց մէջ, ինչ անեմ, ախտոս որ սաստիկ զբաղ-
ված եմ, եթէ ոչ, այնպիսի խորհուրդներ կը գրելի
որ բերանդ բաց մնար»: Մեր քաղաքի հայերն էլ
զուրկ չեն այդ տեսակ անխնայանաւ պա-
պուլներէ: Եթէ չէ հաւատում, վեր առէ՛ք Կ-
Պօլիս հրատարակող «Աւետարան» լրագրի ներ-
քայ տարւոյ երկրորդ համարը և կարդացէ՛ք նրա
մէջ թարգմանի Գ. Պօլսեանի նամակը, որպէս
զի լաւ համոզվէ: Ընթերցողը կարծեմ հասկացաւ
որ Գարութիւն Պօլսեանը մի հայ բողոքական
պէտք է լինի, բայց մենք նախ այս կանխք, որ
նրա կրօնական համոզմունքի հետ գործ չունենք,
այդ իր գիտնական բան է, սակայն այս եւ կա-
մանք, որ մի հայ կրօնական լինելով, նրան ներկած
չէ իրանից կրօնքով տարբեր՝ բայց մի և նոյն
ազգութեան պատկանող անհատներին առեւ և
զրպարտել ամենայն աստիճանով: Մենք մեզ
երբեք թոյլ չէինք տալ մի այդպիսի տգէտ ստա-
հակի հետ գործ ունենալ, բայց որովհետեւ նա
չօչախել է թաւրիղի հայ հասարակութեան պա-
տիւր, հարկ եղաւ նրա տաղանդ նամակի զրպար-
տութիւնները հեղքել: Ահա նրա նամակի զիջումը
տողերը: 1. «300 մանուկներ, գրում է նա,
յանձնված են մի այնպիսի տեսչի, որից շատ օ-
գուտ քաղելու յոյս չը կայ»: Արեւի ինքը տե-
սուչ գտանալ՝ օգուտ կը լինի, բայց իմ կարծի-
քով լաւ կը լինի որ նախ ինքը նոյն տեսչի մօտ
աշակերտ դառնալ և սովորել: 2. Նրա կարծիքով
հայի է եղած թաւրիղում, որ ամեն մի արուսի
10 կին կը գտնվի»: Իսկ մենք դրա հակառակը
կանք, որովհետեւ գաւառներից հեռվեցած ամու-
րի երիտասարդները զարով մեր քաղաքը մնում
են և պատկերում և կարելի է ասել, որ դեռ իրա-
կան սեռը պակաս է գաղթի: 3. «Այդ է պատճա-
րը, աւելացնում է նա, որ ազգի մէջ ամօթալի
դէպքեր են պատահում և կրօնափոխութիւն»:
Եթէ չէ որ պարզապէս կրօնափոխութիւնն էլ
հէնց մի այդպիսի դէպք է պատահել: 4. «Ինքզ
հայ իրական սեռը, գրում է նա, գերի է եւրօպա-
ցոյ անիրաւ գրամին, նրանք պոռնիկութիւնը
և թրքութիւնը անթի մնալից լաւ են համարում»:
Ո՛վ է տեսել մի այդպիսի յանդիման լինը, որ
մասնաւորի համար ընդհանրապէս բոլոր հայ ի-
գական սեռը պոռնիկ համարէ: Բացառութիւն
ներ ամեն տեղ լինում են. միթէ, լուսաւոր և
կրթեալ ազգերի և նոյն իսկ բողոքականների մէջ
պոռնիկներ չը կան: Սա մի այնպիսի ճշմարտու-
թիւն է, որ բոլոր բողոքականները, բոլոր միաֆո-
նաբնիկ անգամ կը խոստովանեն, ի բաց առեալ
զինից քաղաքի դարձած Գարութիւն Պօլսեանը:
Եւ սա այնպիսի մոլեռանդ է, որ կարծեմ է թէ՛ ով
որ բողոքական է՝ մի լոյս է, ով որ աւետարա-
նական է՝ երբեք չի մտախփել: Այդ սխալ ուղ-
ղելու համար մենք նրան մի մօտաւոր բան կը
պատմենք: Արեւի հուշակաւոր Գարթիլիքի սպան-
ման չարագործութիւնը, երեկ և այսօր բողո-
քականութեան փառաբան Միացեալ նախնիների
մէջ պատահեցաւ, թէ Արապատականի հայոց
առաջնորդարանում, որ նրա աչքին մի փուշ է
երևում, Գարթիլիք մի տարր չընթանում մեծացած
լինելով, այնքան մօտ յարաբերութիւն է ունեցել
պոռնիկների հետ, որ նրան յաջողվել է պոռնիկ-
ների սրտի խորքից այդ անպարկեշտ խոստովա-
նութիւնը դուրս բերել, այդ մեղ չէ զարմացնում:
Բայց թող նա լաւ խմանայ, որ պարկեշտաբ ապ-
րելով նահապետական պարզ կենքի մէջ, պոռն-
կութիւնը վաղուց իր այցնտմար նրանից խելով
իրան—Գարթիլիք Պօլսեանին է յանձնել: 4. Դը-

րանից յետ «Աւետարան» նամակագիրը իր արշա-
ւանքը տանում է հայ հոգեւորականների դէմ այս-
պիսի խօսքերով: «Իւրաքանչիւր պատկերից 100
թուան (300 ռուբլի) եկեղեցական տուրք են
պահանջում և այդ է պատճառը, որ երիտասարդ
չեն ամուսնանում»: Ահա քեզ մի խայտառակ
սուտ: Պարսկաստանում, ինչպէս յայտնի է, այն-
պիսի հարուստներ չեն, որոնցից կարելի լինի
այդպիսի գումարներ պահանջել, և եթէ ըստ հին
սովորութեան, հայ եկեղեցականը այս և այն
պատկերից մի քանի դառն կամ մի քանի թու-
մաններ են ստանում, դրանք էլ առանց նշանա-
կութեան չեն: Այդպիսի տուրքներով են կառավար-
վում հայոց հոգեւորականները, եկեղեցիները և
զարդաները, որովհետեւ հայերը ոչ մի ազգից ու-
կինար չեն ստանում իրանց ազգային գործերը
կարգի դնելու համար: Բացի դրանից, մենք այս
էլ կանխք որ, համարեա թէ բոլոր քրիստոնեայ
ազգերը եկեղեցական և ազգային տուրքեր ունեն
և վճարում են: 5. Մեր տարաբնից իր հարուած-
ները կամաց կամաց ինքնեցնող յետ, կամենալով
իր զորք զիւրութեամբ խնդրել, մտնում է Հայաս-
տան լաւի պատրուակի տակ և սկսում է այսպի-
սի երեւիականներ կարգալ «Ո՛վ գտնեմ քո վրադ
ողբալով, խեղճ Հայաստան»: Բայց արդե՞ք լաւ չի
լինի, որ առաջ մէկը գտնէ իր ազգիւրութեան
վրա ողբալով, և այդ խօսքերով ունեն է զարմաց-
նում, ով կը հաւատայ մի այդպիսի զրպարտողի
հայրենասիրութեանը, որ միայն սկանդալ է սեր-
մանում: «Վաքան իր գրութիւն միայն թագնելով
ձիւնի մէջ, չուտով բռնվում է սրտորդներից»:
6. Յետոյ յաջնական կարգը հացնում է հայ
երիտասարդներին: «Նրանք, ասում է, հազուադէպ
և լեղրի կողմանէ նման են բուն եւրօպացոյ, իսկ
բարոյականութեամբ շատ ետ են»: Ինչ սե նա-
խանձ. որովհետեւ ինքը ոչ մի բանի չնորձ չունի,
ոչ մի լեզու չէ հասկանում, կամենում է որ հայ
երիտասարդներն էլ իր նման մեղադրներն նման-
վեն: Մեր մեղքը չէ, որ ինքը լուսաւորչական
հայոց մէջ ամեն բան սե է տեսնում և խոստ-
վանում ենք, որ ամերիկացի միսիօնարը, գտնէ իր
չափ հայաոտեաց չեն: «Աւետարան» խմբագիր
միտար Գրթիլք, մի և նոյն համարում հայոց Միա-
ցեալ ընկերութեանց զարդաների համար արած
գործունէութիւնն է գրում, գտնէ թող նրանից
ամաչէ: 7. Ելմիսնի վրա էլ մի քանի խօսք
անկուղ յետ, մէջ է բերում Աւետարանից «Տիրոջ
գործը, հուճի համար մշակներ հանելը և այլն»:
ուղեւոր հասկացնել, որ ինքն է միայն հաս-
կանում այդ խօսքերի միտքը: Իսկ նրան մենք
պատասխանում ենք, որ տիեզերաց վարդապետ
Յիսուսի աւետարանը հակառակու համար բուն
հայոց ուսեալ երիտասարդները իրանից անհամե-
մատ բարձր են: Իր գրութիւնը դժուար թէ կարողա-
նայ ըմբռնել Աւետարանի բազմապարտական և ա-
տուածաշունչ խօսքերը: 8. Եւ վերջապէս ի լուսն
ամենայն երկանք, մեր երազագաւառում պատկու-
լին սկսում է գովել բողոքականաց զարդեր և ա-
սում է որ. «Աստ աւետարանականը զարդեր
ունեն և ուսուցանում են աստուածաբանութիւն»:
Անշուշտ ուղում է ցոյց առլ, որ ինքն էլ այնտեղ
է ուսել իր աստուածաբանական գիտութիւնը:
Կեցցէ մեր աւետարանական ուսանողը և կեցցէ
մեր բողոքական աստուածաբանը, որ այդպիսի
հայտնական և հայաստեայ նամակ է գրում: «Աւե-
տարան» լրագրին: Այդ նշանակում է Աւետարանի
յիշած «մարգարիտը գցել խողերի ոտքի տակ»:
Վերջացնելով մեր խօսքը, այս միայն կաւեացնենք,
որ Գարթիլիք Պօլսեանը լրագրական ասպարե-
զի մարդ չէ և լաւ կանէ, որ իր փաստաւորէն քա-
չէ: Նա առաջ բան թէ այդ նամակը գրում էր,
պէտք է մտածել, թէ ինքը ինչ շրջանի մէջ է,
ինչ գրութիւն ունի, արդե՞ք իր գրածները կարող
են ազդել ընթերցողների վրա, որովհետեւ լրագրա-
կան աշխարհի պայմանները նրանք չեն, որ խօս-
վում են իրան և իր նմանների շրջանում, այնտեղ
նա կը հանդիպի մեծամեծ արդիւնների և այդ կէ-
տին հանելու համար պէտք են փորձ և գիտու-
թիւն: Այս բոլորը գրելուց յետոյ, այս եւս կա-
մենք, որ հայային սովորած մարդուն այսպիսի
խօսքերն էլ չեն ազդում: Գայլի գլխին աւետա-
րան էին կարգում, ասե՛ք շատ արեւը ոչխարը
սարն անցկացաւ:

Այս տարուայ ձմեռը համարեա թէ մի եղական
բացառութիւն է կազմում. ոչ չէ մտաբերում,
որ Պարսկաստանում այսպիսի մի խիստ և երկա-
րատե ձմեռ եղած լինի: Բացի այս տարվայ ձը-
մեռվայ բնութիւնը, աչքի է ընկնում նրա եր-
կարատեութիւնը, որ իբր 6 ամիս շարունակվեց,

որովհետեւ ժամանակից վաղ սկսեց և ուշ վերջա-
նում է: Յրտի աստիճանը Բ. Թաւրիզում հա-
տաւ 20-ի, իսկ Զենգանում հասել էր 24-ի: Մի
վերջիկ թռչուն կայ, որ մարտի սկզբին երևում
է ու գարնան գալը ծանուցանում: Հայերը նրա
գայլալիկները նմանացրել են այսպիսի հազադե-
րի, որ իբր թէ, նա ասում է՝ «գարուն եկ, եկ,
գարուն եկ, եկ», և յետոյ դարձնելով իր ծղկոցը
մի ուրիշ կերպով է սկսում «եկ, եկ գարուն, եկ,
եկ, գարուն»: Այս տարի էլ այդ թռչունն իր ժա-
մանակին եկաւ և իր երբը շուրջից ամենքի ա-
կանջին, բայց մի և նոյն ժամանակ չեկաւ և իր
սիրած գարունը: Մեր երկրի հայերը գարնան ու-
շանալուց յուսահատելով, հիմա ասում են, որ
այդ գարնան գեղազուարճ թռչունն էլ անցեալ
անգամների պէս չէ երգում, այլ փոփոխելով իր
սիրուն ծղկոցը, առաջվայ ներհանի է ասում
այսինքն, «յետ, յետ գարուն, յետ, յետ գա-
րուն»:

Մենք շատ լրագիրներում կարդացինք Լճուծի
պարսկական դեսպան Միրզա Մեղքում խանի հա-
մար, որ իբր նա կանչված է թէհրան առաջին
մինիստրութեան պաշտօնի համար, բայց մենք
մինչև այսօր այդ լուրը չը կարողացանք ստուգել:
Մեր լաւն այն է, որ նա դարձեալ պէտք է վե-
րադառնայ իր պաշտօնատեղին:

Արմենակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրներին հեռագրում են, մարտի 17-ին
հետեւալը: Միջին Ամերիկայից ստացված տեղե-
կութիւնների համեմատ, մարտի 15-ին, Սան-Կո-
ստանտինոպոլիսի կառավարիչի կողմից հիմ
է արված: Նախագահը չը վստահեցաւ:

—«Presse» լրագիրն չուսից գրում են մարտի
14-ին, որ խաւալական Ֆինանսների մինիստր
Մանվիլանի երեկ ներկայացրեց պատգամաւորնե-
րի ժողովին իր զեկուցումը: Խաւալայի Ֆինանսա-
կան դրութեան մասին: Գործերի դրութիւնը շատ
բարեկեցիկ է: Չը նայելով որ անցեալ տարի ի-
տալիան 10 միլիոն լիրա արտադր կարելի ծախ-
սեր ունեցաւ, այնու ամենայնիւ բիւրժուաի մնա-
ցորդ հասաւ 49 միլիոն լիրայի: Այդ հիման վրա
խաւալական կառավարութիւնը վճռել է ներքին
փոխառութիւն չանել, բայց երկաթուղիների փո-
խառութիւնը:

—Մարդիկ լրագիրներին հաղորդում են մար-
տի 20-ից, որ մէկ քառանգալ Աւետարանայում բո-
ղոքական ծնողների մէկ երեկայի վախը արդեւեց
քաղաքային գերեզմանոցում թաղել և պնդում էր,
որ երեկայի մարմինը թաղվի կաթոլիկական գե-
րեզմանոցում: Ծնողները չը համաձայնվեցան,
այդ պատճառով մանկան մարմինը անթաղ է
մնում:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիայի Նիոն քաղաքում, վալիսի մօտ,
մարտի 24-ին, Նիցայից Փարիզ գնալու ժամանակ
վախճանվեցաւ Ֆրանսիացի հուշակաւոր նկարիչ
և պատկերահան Քլեման: Նրա իսկական անունն
էր Դարլ-Ալբեր: Վախճանը Գ. Միսու և Կոստ դէ-Լիւմո-
Վէն-Սանտ: Նա ծնվեցաւ Փարիզում 1820 թիւ
դեկտեմբերի 18-ին, և նրա ծնողները կամենում
էին նրան Պօլտեխնիկական ուսումնարանը տալ,
բայց Քլեմանը գերադասեց նկարչութեամբ պարա-
պել և մի քանի տարի սովորում էր Գրօլինգի
մօտ, որից դուրս եկաւ նկարչութեան և պատկե-
րահանութեան իրան նուիրելու համար: Նրա
պատկերները գրեթէ ի կարիկատուրներին համար
էին, և այդ արհեստի մէջ նա չուտով հուշակու-
ցաւ: Նրա մատիւր սաստիկ պարագայ էր: Ոչ
մէկ պատկերագրող ամապիլ կամ լրագիր չը
կար, որոնց մէջ նա մասնակցելիս չը լինէր: Մա-
նուսանող նշանաւոր են Բալլապիլի և Պօլիկօպի բո-
մանները համար նկարած նրա պատկերները: Հօ-
ղովորական մէկերի հաւաքածուի մէջ միայն նրա
մատիւրն պատկանում են 3,000 պատկերներից
տակը: 1848 թիւին է սկսում հուշակուլի նրա ա-
նունը, որպէս կարիկատուրիստի: Նա առաջինը
մտածեց նկարել Տիւրին մէջը շուտ տուած դէպի
ընթերցողը, և հուշակաւոր ցցված մարդով գլխի
վրա: Քլեմանը նոյնպէս սրամիտ դրող և կրթիկ
էր: Նրան են պատկանում մանուկների համար
բազմաթիւ ալբոմների թէ, ընդգրկել և թէ պատկեր-
ները, իսկ վերջին տարիները նա մի քանի մեծ
պատկերագրող հեղինակութիւններ հրատարակեց,
որոնք մեծ աշխուժութիւն ունեցան:

Խմբագիր—հրատարակող ԳԲԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐՇԱՎԱԿԱՆ ՊԵՏԱԴԱՐԱՆ

ՍՈԼՈԼԱԿՈՒՄ

Պատիւ ունեւ յայտնել թիֆլիսի մեծապատիւ հասարակութեան, որ առաջիկայ զատիկի տօնի համար ընդունում եմ պատուէրներ պատգամ, կուլիլի, պօլկի մագուրկայի, տօրտի և ամենայն տօնին յարմար բաների, վատահ լինելով իմ նոր բերել աված վարպետներին համարութեան վրա ամեն վրատահութեամբ դիմում եմ մեծ. հասարակութեան որ չը զլանան դիմելու մեզ իրենց պատուէրով:

Մ. Հախնազարեանց

ՄՈՒՐԱՔԱՆ, շաքարի ձուաներ, պանիր-չեստեր, խաւար և այլն: Ծախվում են շատ էժան

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ

ՄԷՉ

Նոյն տեղ ծախվում են. բազկաթուղի մահաճակալ 8 ր., ամբողջ ՀԱԳՈՒՍՏ 12 ր., չը թըջող վերարկուներ 6—18 ր. և մեծ քանակութեամբ ՐԵՎՈԼՎԵՐՆԵՐ, դանակներ և այլն:

1—10

ՔԻՄԻԱԿԱՆ ՆԵՐԿ

Ամենամեծագոյն, բոլոր գոյների հետ գործածութեան եղանակը: Պրովանսեան 2 է Թ ֆունտը 60 կ., և տուրքատի նոր պատկանելիքներ: Գրովնակ, լօնդօն հիւրանոցի տակ:

4—5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ թիֆլիսի քաղաքային հասարակութեանը 750,000 ր. օրինգայիններ հրատարակելու մասին ֆինանսների մինիստրից 1881 թ. ապրիլի 20-ին հաստատած կանոնների 11 յօդուածի հիման վրա, ներկայ 1882 թուականի ապրիլի 1-ին առաւօտեան 12 ժամին թիֆլիսի քաղաքային դռանցի դահլիճում քաղաքային վարչութեան ներկայութեամբ հրապարակապէս կը կատարվի քաղաքային օրինգայինների հանգչման տիրածը 15,300 ռուբլ գումարի: 2—3

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ

ՄԻՆՁԵՒ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՉԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 կ. դիւթիւնը, ԾՐԱՆԵՐ 3 կ. հարկերը, սապօն 3 կ. հատը, արեւի ժԱՄԱՅՈՅՆԵՐ 50 կ., ՇՂԱՆԵՐ (նոր ուկուց) ժամացոյցի համար 50 կ., կրաններ 10 կ., ջրի ամաններ 30 կ., կիժը 25 կ., կախարաններ 4 կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 ր., ծըծիչներ 1 ր., հայելիներ 35 կ., վարակներ 4 ր., պիշակներ 6 ր., ԱՄԲՈՂՁ ՀԱԳՈՒՍՏ 13 ր., գլխարկներ 1 ր., չը թըջող վերարկուներ 6 ր., շէտակա 90 կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 2 ր. 50 կ. դիւթիւնը, ՄԵՂԱՄՈՒՄ 32 կ. անգլիական ֆունտը, կանֆեսներ 40 կ. ֆունտը, ԳՐԱՊ, տրիկո, ԱԼԲՈՒՆԵՐ, բրդանակա մետաքի առարկաներ և այլն կիսագրով, մամեր, մուրաբա և այլն շատ էժան:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ԱՐՄԵՆԻԱՆԻ ԳԱԼԵՐԷՑ:

5—50

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ

ТУРЕЦКИХЪ АРМАНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՐԱՅՅԻԻ

Գ Ա Ւ Ի Թ Բ Է Կ Ի

III ԳԻՐԲԸ

Բաղկացած է 563 երեսներից

Գինն է 2 ՐՈՒԲԼ

Վեպի այս հատորի մեկավաճառութիւնը պատկանում է բացառապէս թիֆլիսի պետական գրադարանին: Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցեով:

ЦЕНТРАЛЬНАЯ КНИЖНАЯ ТОРГОВЛЯ (на Головинскомъ проспектѣ въ д. Мириманова, №№ 3 и 4).

ВЪ ТИФЛИСѢ

2—10

Պատիւ ունեւ յայտնել որ իմ նոր բացած ՖԱԲՐԻԿԱՑԻՈՒՄ լաւ ԾԽԱՌՈՏԻ սիրողները և գործածողները կը գտնեն

ԸՆՏԻՐ ԾԽԱՌՈՏ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

Մաքուր թիւրքաց, ամենալաւ տեսակների ծխախոտից, առանց որ և է խառնուրդի: Եւ երաշխաւոր եմ որ իմ պատրաստած ծղխախոտը կարող է բաւականացնել ամենաընտիր ծաղակին: Ծխախոտի գինը, ֆունտը 3 ռուբլուց մինչև 10 ռուբլ, իսկ պապիրոսների 100 հատը սկսած 1 ռուբլուց, մինչև 3 ռուբլ:

Գործարանս գտնվում է 3-րդ բաժնում Հեռագրական կայարանի մօտ, իսկ մագազինս Արծրունու զայլերէում, Գփօրցովի փողոցի վրա, № 3.

Պարտք եմ համարում այն էլ աւելացնել որ իմ ֆաբրիկայի արդիւնաբերութիւնները կը ծախվեն միմիայն իմ մագազինում:

Գործարանատէր ՇԱՀԻՆԵԱՆՑ

13—25

ԱՐԾԻՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Պարական պայտատկան արտիստ

ԲՐԵՆՏԼԵՆՑ

պատիւ կունենայ ջատկից յետոյ ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹԸ ըստ կազմ մարտի 28-ից մինչև ապրիլի 4-ը տալ ամենայն օր ԿԱՍԱԴԱԿԱՆ և ֆիզիկական մեծ ներկայացումներ բոլորովին ՆՈՐ ՊՐՕԳՐԱՄՈՎ:

Պ. ԲՐԵՆՏԼԵՆՑ, վերջին



երկու շաբաթների ընթացքում ներկայացումներ չը տալով, նոր ՍՏԱՅՎԱԾ մի քանի ԳՈՐԾԻՔՆԵՐԻ օգնութեամբ պատրաստեց ԲԱՉՄԱԹԻՒՆ ՆՈՐ ՊՐՕԳՐԱՄ, որոնք Ռուսաստանի մէջ ոչոքից չեն յոյց տուած և որոնք ներկայումս ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՄԵՇ ԱՅՈՂՈՒԹԻՒՆ ունեն:

Ներկայացման սկիզբն է երեկոյեան 8 ժամին:

Ներկայացման սկիզբն և անտրականների ժամանակ կածէ զինուորական երաժշտութիւնը պ. Պարիֆիլի առաջնորդութեամբ:

ՏՈՄՍԱԿՆԵՐԸ և մանրամասն պրօգրամները կարելի է ստանալ ԹԱՏՐՈՆԻ ԿԱՍԱԿՈՒՄ ամենայն օր առաւօտեան 10 ժամից:

2—2

ԱԼԷՔՍԱՆԴՐԻՒՄ

ԱՊԱԿԻՆԵՐԻ գործարանս բացված է և պատրաստում է ՇԵՆԵՐ, ԲԱՆԿԱՆԵՐ, ԲՈՇԿԱԿԱՆ ՇԵՆԵՐ, ԹԵՅԻ ԱՄԱՆԵՐ, ամեն տեսակ առարկաներ ԼԱՄՊԱՆԵՐԻ համար:

Նոյնպէս ընդունում է պատուէրներ առանձին ձևերի: Գործարանի արդիւնները ֆԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ծախվում են ՍԻՄԵՆՍԻ և ԳԱԼԵՐԷՑԻ կանտորայում թիֆլիսի երկրորդ Գիմնազիային կից:

ԲԱՐՈՆ ՖՈՒՆԿՈՒՉԵՆԲԱՒ

5—5

Վերականգնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲԵՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերագործող: Ճնդ, Գինը 2 ր. շիշը, ՓՈՍՏԱՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կօպ. ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ



Մի և նոյն տեղը ԻՒՆԱՅԻ ԻԻՂ, մազերը ամրացնող համար, 1 ր. ամանը և վրձին գլխապաշտի գէտ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՈՒՆ և հոտաւէտ ջրեր և այլն 99—100

Մի ջի փողոց, Կաթօլիչէսկայա փողոցի անկիւնը № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻՆԵՆԱՅԻ ՄԵՐԵԼ ամենայն տեսակ, ֆրանսական և անգլիական երկաթէ կրակաւորներ 8—30 ր., չամարաններ 250—25 ր., սակօյաճներ 1. 30—12 ր., սոսն դուկն եր ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребы) 6—25 ր., սա մօ վարներ 60 կ.—1.25 ֆունտը, կուլանի պղնձ ամաններ, Գերմանիայի երկաթէ էմալով ամաններ, ու մի վալնի կն եր մրա մօ րնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լալանի 6—32 ր., ու էվօլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրաններ. (գուլաններ) ըէվօլվէրի, սիգար Ռէնգարդի ֆարրիկից. պապիրոս և թամբաբու կուշնարովի զիլի պապիրօզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԵՑ (չայ) եղ. ՊԱՊԱՎՆԵՐԻ, բիսկիւտ. (ստիպար չայու և կաֆէր) Էլինէմի. կօֆէ Էլինէմի և ՄԻԼԷՅՈՅԻ. Պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրօրկայ գինէվաճառների, հանրային և դարեջրի (ДЛЯ ЗЕЛѢТЕРСКИХЪ ВОДЪ И ПИВА) դուլթուկ (пучки), պաղտաններ սամուլարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆարրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուլթիւր. գրչալիթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջրի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուլանի 1—40 մինչև 3—20 կ. պրիօր. միս կարելու մաշիկայ. Անգլիական ուլթոններ, բրիտանակի չայնիկներ, կաֆէրներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէր համար, ֆիլտրեր—Չուր մաքրելու, կրակաւոր կարօրէին 18 կ., վաքս ֆրանսիայի ծակոյ, թուղթ փոշաի, կանկրետներ, սուրբուշ, մախիտ, գրիչ երկաթէ, գրչալիթ, քարտասխտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիներ, գալանի սեղանի և չայու ֆրաճէ, վարչալի և բրիտանակի դուլթիւր 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուս միչէլէք 45 կ.—5 ր., շամաղաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. Չուստ, պրոսպապիկաններ վարչալու, ՌԵՅԻՆԻ ԿԱՂՈՇՆԵՐ, ամեն տեսակ, դուլթաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. Չուստ, շապիկներ, մարդկերանց դաւուստիկներ, գոնաիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրեի և շրքի. անդրեր շիրմայու ոսկորէ, դուտապիլովի և փայտէ, շշտակներ գլխի, շրքի, սապիկի, պոլի և կարտի համար. չուլթի թէլ (бумага) մատկի կօճի և շալէ (газусь) ֆէրչաակէք մարդկերանց և կանանց, պրոտմաններ, քիսաններ, պապիրոսի ամաններ և մանր գոլանաբերիկներ ապրանքներ, սապիտ ամեն տեսակ 3 կ.—30 կ., կտոր, հոտաւէտ ջրեր, պուրպ, Գլիցերին ջրի քացալ, հոտաւէտ պարաշիկներ ԿԻԼԵՐԻ ԼԱՐՈՐԱՏՈՒՅ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցիլեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՐԱՅԷԼ ՏԵՐ ՆԻԿՈԼՈՍԵԱՆՑԻ պահեստում. (ВЪ СКЛАДѢ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցեով. Тифлисѣ Михаилу Н. Теръ-Никогосову.

19—180

Մի ջի փողոց, Կաթօլիչէսկայա փողոցի անկիւնը № 13.